# ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 24-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:
Ընդունելությանը մասնակցել է 50 քաղաքացի: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով մարզպետին դիմել էր երեսունութ, աշխատանքի տեղավորման՝ ութ, պետպատվերի շրջանակներում վիրահատվելու, տանիքի վերանորոգման, վթարային շենքի վերանորոգման, ճանապարհի բարեկարգման հարցերով՝ մեկական քաղաքացի:
Դրամական օգնության երեսունութ դիմումներից երեսունյոթին տրվել է դրական լուծում, մեկը՝ մերժվել: Պետպատվերի շրջանակներում վիրահատվելու մասին քաղաքացու խնդրանքը բավարարվել է:
Շենքի տանիքի վերանորոգման, վթարային շենքի վերանորոգման, ճանապարհի բարեկարգման վերաբերյալ մարզպետը աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարել է ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն:
Հաշվառման են վերցվել աշխատանքի ընդունվելու մասին դիմումները:



